



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg. Republic Sq. Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ. փոստ /E-mail/ эл. почта: e.oircumyan@mnp.am
Web page: www.mnp.am
(374 10) 58 54 19
.. /374 10/ 54 08 57

№ 5/12.1/51355
<<22> 05 2014 թ.

Երևանի բնապահպանական տեղեկատվական
հասարակական <<Օրիոն>> կենտրոնի
համակարգող Ս. Այվազյանին

Հարգելի տիկին Այվազյան

Ի պատասխան Ձեր 2014թ. ապրիլի 30-ի գրության, հայտնում եմ, որ
<< բնապահպանության նախարարությունը Երևան քաղաքի վարչական
տարածքի սահմաններում ջրային օբյեկտների մոնիթորինգ իրականացնում է
Երևանյան լճում (դիտակետ 112) և Գետառ գետի գետաբերանի հատվածում
(դիտակետ 59): Դիտակետերը գտնվում են Երևան քաղաքի վարչական
տարածքում: Հրազդան գետի՝ Երևան քաղաքին ամենամոտ մոնիթորինգի
դիտակետը գտնվում է Արարատի մարզի Գեղանիստ գյուղում (դիտակետ 225):

Գետառ և Հրազդան /ըստ Գեղանիստ գյուղում տեղակայված դիտակետի/
գետերի ջրերի աղտոտվածությունը գնահատվել է համաձայն <<
կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված 11-ի:
<<-ում կիրառվող գետերի ջրի քիմիական որակի գնահատման նոր համակարգը
ջրի որակը դասակարգում է 5 դասի՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս),
միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Այն հիմնված է
<<մեկը դուրս՝ բոլորը դուրս սկզբունքի վրա>>, այսինքն եթե ցուցանիշներից
որևէ մեկը 5-րդ դաս է, ապա ջրի որակը ևս 5-րդ դաս է: Ըստ այս
դասակարգման Գետառ և Հրազդան գետերի ջրերի որակը, համաձայն 2013թ.
մոնիթորինգային տվյալների, վատ է (5-րդ դասի): Հիմնական աղտոտիչներն են՝
ամոնիում, նիտրիտ, նիտրատ և ֆոսֆատ իոնները, թթվածնի քիմիական
պահանջարկը, կախված մասնիկները, ինչը պայմանավորված է կոմունալ-
կենցաղային կեղտաջրերի էական ճնշմամբ:

Երևան քաղաքի վարչական տարածքի արտադրական
ծեղնարկությունների կեղտաջրերի հեռացումը կատարվում է քաղաքային
կոլեկտորի միջոցով:



Քանի որ Հրազդանի կիրճում քացակայում է կոյուղու կոլեկտորի համակարգը, այնտեղ գործող տնտեսվարող սուբյեկտները, բնապահպանական օրենսդրության պահանջներին համապատասխան, մշակել են ջրօգտագործման և ջրհեռացման անհատական նորմեր և ստացել արտահոսքի թույլտվություն: Տնտեսվարող սուբյեկտները կառուցել են փակ բետոնյա հորեր /շամբոներ/, կեղտաջրերը հավաքվում են այդ հորերում և համապատասխան մեքենաների միջոցով այն տեղափոխվում է քաղաքային կոլեկտոր:

Տեղեկացնեմ նաև, որ Հրազդան գետը Երևան քաղաք է մտնում արդեն իսկ աղտոտված Հրազդան քաղաքի կոմունալ կենցաղային կեղտաջրերով, ինչը պայմանավորված է Հրազդան քաղաքի կենսաբանական կայանի չաշխատելով: Գետառ և Հրազդան գետերն Երևանի վարչական տարածքներում աղտոտվում են հիմնականում կենցաղային կեղտաջրերից, ինչի պատասխանատուն է «Երևանջուր» ընկերությունը:

Ըստ 2013թ.-ի մոնիթորինգային տվյալների՝ Երևանյան լճից վերցված փորձանմուշներում որոշված ցուցանիշներից սահմանային թույլատրելի կոնցենտրացիան գերազանցել են նիտրիտ, ամոնիում իոնները, թթվածնի քիմիական պահանջարկը, ալյումինը, վանադիումը, քրոմը, մանգանը, պղինձը և սելենը: Երևանյան լճում դիտվել է վանադիումով բարձր աղտոտվածություն, վանադիումի միջին տարեկան թույլատրելի կոնցենտրացիան գերազանցել է 20.1 անգամ: Նիտրիտ և ամոնիում իոնների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները գերազանցել են համապատասխանաբար 6.2 և 2.0 անգամ, ալյումինինը՝ 1.7 անգամ, քրոմինը՝ 4.7 անգամ, մանգանինը՝ 3.3 անգամ, պղինձինը՝ 4.4 անգամ, սելենինը՝ 6.9 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների սահմաններում:

Հարգանքով



Է. Փիրումյան